



Empowered lives.
Resilient nations.

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ԿԱՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ» թեմայով ակնարկի

ՄԱԶԾ-ն (Միավորված ազգերի զարգացման ծրագիր) ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցաբար Ռուսաստանի Դաշնության կառավարության ֆինանսական աջակցությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի 22 (Ճամբարակ, Թթուջուր, Վահան, Արտանիշ, Ջիլ, Ծափաթաղ, Վարդենիս, Ներքին Շորժա, Վերին Շորժա, Սոթք, Ավազան, Արփունք, Գեղամասար, Դարանակ, Կախակն, Կուրթ, Կուտական, Նորաբակ, Շատվան, Տրետուք, Փամբակ, Արեգունի) սահմանամերձ բնակավայրերում մեկնարկել է «Կայուն համայնքներ» Օրագրի իրականացումը:

Օրագրի իրականացման ռազմավարությունն իրեն մեկնակետ ընդունում է այն մտտեցումը, որ համայնքային զարգացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարդիկ ներգրավվում են իրենց կյանքի վրա ազդեցություն ունեցող խնդիրների վերհանման ու լուծման գործընթացներում: Այդ իսկ նպատակով ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագիրը վերոնշյալ բնակավայրերում առավել մասնակցային և թիրախային Օրագրեր իրականացնելու հեռանկարով, հայտարարում է «**Կայուն համայնք**» թեմայով ակնարկի մրցույթ, որին կարող են մասնակցել բնակավայրերի բոլոր բնակիչները՝ անկախ սեռից և տարիքից:

Մրցույթի անցկացումն ի թիվս այլ միջոցառումների, նպատակ ունի բնակիչներին մասնակից դարձնել և առիթ տալ ներկայացնելու դիտարկումներ իրենց համայնքի զարգացման խնդիրներին, ձևակերպել համայնքի ապագայի իրենց երազանքը, վեր հանել ներկա հիմնախնդիրները (պրոբլեմները), առաջարկել դրանց լուծման ուղիներն ու առաջնահերթությունները, խոչընդոտները, համայնքի բոլոր բնակիչների համար ընդունելի արժեքները, նպատակները:

Ներկայացված աշխատանքները գնահատվելու են ՄԱԶԾ-ի փորձագետների կողմից և իրատեսական առաջարկները ներառվելու են կոնկրետ բնակավայրում զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներում:

1. Աշխատանքից մեր ակնկալիքներն են.

- Համայնքի մասին պատմական, ժողովրդագրական, տնտեսական, սոցիալական, մշակութային, բիզնես, կրոնական, քաղաքական, քաղաքացիական, այլ ոլորտների մասին հարուստ **տեղեկատվություն**,
- Համայնքի ներկա իրավիճակի **վերլուծություն** Ձեր այսքերով՝ (*«ն՞վ եմ ես, ի՞նչ նպատակներ ունեմ, ո՞րն է իմ երազանքը, ի՞նչ եմ անում համայնքի զարգացման համար, ովքե՞ր ենք մենք միասին՝ իբրև հավաքականություն, որտեղի՞ց ենք գալիս (հնուց եկած ավանդույթներ, պատմություններ), ո՞ր ենք հասել, ո՞ր ենք գնում, որո՞նք են մեր համայնքում ընդհանուր նպատակները, ի՞նչ ենք անում համայնքի զարգացման համար, որո՞նք են նպաստող պայմանները, որո՞նք են խոչընդոտները, որո՞նք են մեր համայնքի բնակիչների ընդհանուր արժեքները, որոնց շուրջ կարող ենք համախմբվել, ինչո՞վ ենք նման միմյանց, ինչո՞վ ենք տարբեր, որո՞նք են մեր եկամտի հիմնական աղբյուրները, ո՞րն է ամենակարևոր ասելիքը, որ կուզեի փոխանցել հանրությանը...»*),
- Համայնքում առկա հիմնախնդիրների և **դրանց պատճառների վերլուծություն**,
- Համայնքում զարգացման մասին **առաջարկներ, առաջնահերթությունների սահմանում և հիմնավորում**,
- Համայնքի **բնակիչներին բնորոշ հատկանիշների** ներկայացում (բնավորության գծեր, սովորույթներ, արհեստագործական հմտություններ և այլն),
- Համայնքի **հեղինակավոր անձինք** (մարդիկ, որոնց կարծիքը կարևոր և էական է մեծամասնության համար),
- Այլ համայնքների (տեղական, միջազգային) հետ **համագործակցության հնարավորությունների առաջարկ** և դրանց հիմնավորում:

**ՆԵՐԿԱՅԱՑՅՎԱԾ ԱՎՆԱՐԿԻ ՄԵՋ ՀԱՏՈՒՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՒ ՀԵՐԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ
ԲԱՐՁՐԱՑՅՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ
ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ:**

**ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ Է 3 (ԵՐԵՔ) ԽՐԱՌՈՒՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ.
ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԿԻՏԱՐԿՎԵՆ ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ:**

2. Աշխատանքը կարելի է ներկայացնել ինչպես տպագիր (ոչ ավելի, քան 2 էջ), այնպես էլ՝ ձեռագիր (ոչ ավելի քան 3 էջ):

3. Աշխատանքի հանձնման վերջնաժամկետն է՝ հուլիսի 20-ը, երկուշաբթի, 2020 թ., ժամը 18:00:

4. Աշխատանքը ուղարկվում է էլեկտրոնային փոստով hripsime.manukyan@undp.org էլեկտրոնային հասցեով կամ +374 99 274230 հեռախոսահամարին կցված Viber-ով, WhatsApp-ով կամ Telegram-ով:

Աշխատանքի արդյունքները կամփոփվեն և մրցանակաբաշխության մասին կտեղեկացվի լրացուցիչ: